

---

## ԷԶԵՐ ԼԵՅԱՆԱՅԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

### ՊԱՎԻԹ ԿՈԼԲԱՅԱ

(Վարշավա)

Լեհ-հայկական հարաբերությունները բացառիկ տեղ ունեն Լեհաստանի հետ աշխարհի տարբեր ազգերի ունեցած կապերի պատմության մեջ:

Իններորդ դարը համարվում է լեհ-հայկական կապերի սկիզբը: Հենց այդ ժամանակից հայերը բնակություն են հաստատել լեհական հողում: Նախկինում հայեր եղել են միայն Կամենեց-Պոդլյակում, Գալիցիայում և Վլադիմիրում: Լեհերը բարյացական էին տրամադրված իրենց հողում հայերի բնակեցմանը: Լեհ իշխանները հաճախ հենց իրենք էին նրանց իրավունք: 1256թ.՝ Լվովի իիմնադրման ժամանակ, իշխան Պավել Գալիցիին հայերին առաջարկում է բնակվել նորաստեղծ քաղաքում՝ նրանց տալով քաղաքի հյուսային մասի իշխանությունը:

Ամբողջ XII դարը հայերի համար եղավ լեհական հողերում բնակեցման ժամանակաշրջան: Հատկապես այդ ժամանակ են ծևավորվում հայկական քաղաքասեր Գալիցիայում, Կամենեց-Պոդլյակում, Վլադիմիրում և Լուցկում, որը համարվում էր հայերի կրոնական կենտրոնը: Հայ-լեհական հարաբերությունները բուռն զարգացում են ապրում տասնչորսերորդ դարում՝ ի նասնավորի Կազիմեժ Սեծի կառավարման տարիներին (1333-1370): Թագավորը հայերի բնակեցման գործընթացը կազմակերպեց երկրի տնտեսական զարգացմանը գուգրներաց: Նրա օրոք հայկական երկու կարևոր կենտրոնները՝ Կամենեց-Պոդլյակը և Լվովը, զգալի արտոնություններ ստացան: Ստեղծվեց սեփական ավագանու խորհուրդ, որը կարող էր լուծել հայերի միջև ծագած տարբեր տեսակի վեճերը: Այն բաղկացած էր տասներկու դատավորից, որոնց գլխավորում էր վոյտը (գյուղապետը): Այդ արտոնությունները պահպանվեցին նաև նրան հաջորդողների՝ Վլադիմար Յագելլոնի և Զիգմոնդ Ավագի ժամանակ: Ավելին, վերջինն 1519 թ. Պյոտրկովի Սեյմում հաստատեց Լվովի հայերի Օրենտությունը: Դրանով իսկ հայերը փաստորեն Լեհաստան տեղափոխեցին իրենց սեփական օրենքները, որոնք իրավական բազա դարձան Ուչպուսովոյտայի հայկական դատական պրակտիկայի համար: Ըստ Էության այն տարածում ստացավ նաև Լեհաստանում գործող հայկական մյուս համայնքներում: Իսկ դա նշանակում է, որ լեհահայերը դեկապում էին իրենց հեռավոր հայրենիքից բերված հայկական օրենքներով: Դա մեծապես նպաստեց հայերի՝ Լեհաստան գաղթելու գործընթացին: Տասնչորսերորդ դարում լեհական տարածքում հայտնվեցին այնպիսի գյուղեր, որտեղ բնակվում էին բացառապես հայեր: XVI դարում ուժեղացավ հայերի արտագաղթը դեպի Լեհաստան Բալկանների և Կովկասի վրա բոլքերի հարձակման հետևանքով: Հորման Դեյվիսի տվյալների համաձայն՝ Լեհաստանի սահմաններում բնակվող հայերի թիվը այն ժամանակ հասնում էր 10 000-ի:

Հայկական նոր գաղթավայրեր հայտնվեցին Բարում և 1586 թ. Յան Զամուստի իիմնած Զամոստ ամրոցում, որտեղ ևս հայերին իրավունք տրվեց ստեղծելու քաղաքային կառավարման առանձին օրգան և դատարան: Լեհաստանում հայերի

բնակությանը նպաստում էր երկու կարևոր գործոն. ա) Հայաստանի քաղաքական ժամանակուն և բ) Լեհաստանի տնտեսական և մշակութային զարգացումը: XVII և XVIII դարերում նոր զաղութներ հայտնվեցին Բալթում, Կուտերում, Սոհիլեում և Ռամենում: Մինչև XIX դարը հայերը բնակություն հաստատեցին նաև լեհական այլ քաղաքներում՝ Գդանսկ, Կրակով, Լյուբլին և Պլոցկ: Սակայն այդ քաղաքներում նրանք չունեին նույնալիքի ինքնավարություն, ինչպես ունեին հայկական մյուս զաղթօջախներում: XIX դարում, եթե Լեհաստանը կորցրեց իր անկախությունը՝ ենթարկվելով քաղաքական և տնտեսական լուրջ փոփոխությունների, հայերը նույնպես կորցրին իրենց ինքնավարությունը: Նրանցից շատերը լրեցին Լեհաստանի սահմանները՝ մեկնելով Արևելյան Հայաստան (1828-ից հետո այն գտնվում էր Ռուսաստանի իշխանության տակ), Աղքաղացն, Վրաստան և Ռուսաստանի խորքերը, ինչպես նաև աշխարհի այլ երկրներ (ԱՄՆ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա):

Լեհաստանում բնակող այլ ազգերի հետ համեմատած՝ հայերը մշտապես աչքի են ընկել իրենց առևտրական ձիրքով: Առևտուրը կարևոր գործոն էր հայ-լեհական կապերի հաստատման և Լեհաստանում հայկական զաղթօջախների ստեղծման համար: Դրան նպաստում էր և այն հանգամանքը, որ Լեհաստանը հենց սկզբից գտնվում էր տարանցիկ և հեռագնա առևտրի խաչմերուկում: Արդեն տասներորդ դարում նրա տարածքով էր անցնում Արևմուտքից մինչև հին Ռուսիա և Արևելք ճգփող առևտրական ուղին: Տասներկուերորդ դարից Լեհաստանի և Արևելքի (Կովկասի, Պարսկաստանի, Թուրքիայի, Արարայի, Սիրիայի, Եգիպտոսի, Հնդկաստանի) միջև առևտրական միջնորդի դերը սկսեցին ստանձնել հայերը: Լեհական կառավարությունը բարձր էր գնահատում նրանց այդ դերը: Հայերը իրենց ծագման շնորհիվ լավ գիտեին արևելքի երկրների մտածելակերպը, հակումները, պահանջները: Հայ վաճառականության վարկն ավելի մեծացավ հատկապես 16-18-րդ դարերում՝ այսպես կոչված «արտիստական ճաշակի օրիենտալացման» ժամանակաշրջանում: Այդ ընթացքում մեծ հետաքրքրություն առաջացավ արևելյան հագուստների, գենքի, բանկարժեք իրերի նկատմամբ: Այդպիսի մոլորդյունների հակված էին հիմնականում երկրի դեկավարները, մազնատները, հարուստ ազնիվականությունը և քաղաքային ընտրանին: Լեհաստանից մինչև Կովկաս ճանապարհը անցնելու համար վաճառականները ստվորաբար օգտվում էին արդեն գոյություն ունեցող առևտրական ուղիներից: Կասկածից վեր է, որ այդ ուղիները ձևավորվել էին հիմնականում հայերի շնորհիվ:

Արևելքի հետ առևտրական կապերի ամրապնդման գործում կարևոր դեր ուներ հատկապես Գդանսկը, որտեղ նույնպես հաստատվել էին բազմաթիվ հայեր:

Տասնյոթերորդ դարի կեսերին արևելյան ապրանքների նկատմամբ պահանջարկի կտրուկ մեծացման հետևանքով Լեհաստանում մեծ բափով սկսեց զարգանալ արևելյան ոճ ունեցող իրերի արտադրությունը: Ստեղծվում էին գորգեր, վրաններ, զարդեղեն և համանաման այլ ապրանքներ: Լվովում արհեստների ամենամեծ կենտրոններից մեկում, նոյնիսկ գոյություն ուներ մասնակտուրա, որը ստեղծվել էր հիմնականում հայ ասեղնագործողների, մորքագործների, զինագործների, կաշեգործների, ոսկերչների արհեստանոցների հիման վրա: Բացի տնտեսական ոլորտից՝ հայերը աչքի են ընկնում նաև երկրի պաշտպանության, դիվանագիտության և մշակույթի տարբեր ոլորտներում:

Տասնչորսերորդ դարից սկսած մինչև Ռեչպուստայի անկումը հայերը գործուն մասնակցություն են ունեցել զինվորական համակարգում. նրանք 1410 թ. մասնակցել են Գրունվալդի (երկու հայկական վաշտ), 1444 թ.՝ Վարնայի (հայկա-

կան ֆորմացիա), 1683 թ.՝ Վիեննայի (5 հազար հայ) ճակատամարտերին, ինչպես նաև մյուս կարևոր մարտերին:

Յան III Սոբեսկին, քարձը գնահատելով Լեհաստանին հայերի մասուցած ծառայությունները, ելքեր էր փնտրում թուրքական լծից հայերի ընտանիքներին ազատագրելու ուղղությամբ: Ինչ-ինչ հանգամանքների պատճառով, ցավոր, այդ մտադրությունը ի կատար չածվեց, չնայած այն բանին, որ արդեն իսկ ձեռնարկել էին առաջին քայլերը: Թագավորը շատ շուտով կնքեց իր մահկանացուն, իսկ նրա հետնորդները ոչինչ չարեցին այդ ուղղությամբ:

Ընդհանրապես հայերը աշխարհում ճանաչված էին որպես լեզուներ իմացող, հետաքրքրասեր ու հմուտ մասնագետներ: Ընորիկվ այդ հատկանիշների՝ Լեհաստանում նրանք կարողանում էին իրենց դրսնորել ոչ միայն տնտեսության մեջ ու մշակույթում, այլև պետական ու դիվանագիտական ծառայության ասպարեզում: Հայերի դիվանագիտական հնտությունները լավագույնն դրսնորվել են Լեհաստանի և արևելյան մի շարք երկրների միջև դիվանագիտական կապեր հաստատելու գործում: Արևելքում դիվանագիտական ծառայության մեջ ամենանշանավոր դեմքը եղել է Գ-ժեգոն Հայը (1415 թվականին մասնակցել է թուրքական սուլթանի պաշտոնական դիվանագիտական առաքելությանը): Ճանաչված դիվանագետներից են եղել նաև Սեֆեր Մուրադովիչը՝ Սերբկովիչների տոհմից, Յան Իվաշկիչը, Քշիշտոֆ և Զաքարիազ Պետրովիչները, Յան Տարասիչը, Սոլեյման Կոնստանտինը, Գ-ժեգոն Արտակովիչը և Թոմազ Արքահամովիչը: Լեհաստանում աշքի ընկած մեծ դեմքերից է եղել Մուրադովիչը, որը թագավորական պալատին գորգեր էր մատակարարում: Նրան 1601 թվականին Զիգմոնտ III Վազան ուղարկեց Պարսկաստան՝ ճանապարհորդության, որը տևեց ավելի քան երեքհարյուր օր: Թագավորը քարձը գնահատեց այդ ուղղությունը և Մուրադովիչին տվեց “servior ac negotiator” տիտղոսը, որը նրան ազատում էր դատարանի իրավասությունից և տախս անսահմանափակ իրավունք՝ արքայական պալատը արևելյան ապրաներով մատակարարելու գործում: Լեհ թագավորները մեծ վստահություն ունեին Սերբկովիչների տոհմի հանդեպ: Զիգմոնտ III-ի թագավորության ժամանակ Ստեփան Սերբկովիչը կատարում էր դիվանագիտական ծառայություններ Օսմանյան նավահանգստում, որից հետո դարձավ Վլադիպավ IV-ի քարտուղարը: Նրա եղբայրը՝ Քշիշտոֆը, աշխատում էր Թուրքիայում Լեհաստանի դեսպանատանը:

Այդ նույն տարիներին արքայական գրասենյակի արևելյան լեզուների թարգմանիչը Պյոտր Սերբկովիչն էր:

Դիվանագիտության ասպարեզում հայերի ակտիվությունը հանգեցրեց այն բանին, որ XVI-XVII դարերում նրանց համարում էին Ռեչպուսպոլիտայի արևելյան հարցերի հիմնական մասնագետներ:

Որպես առևտրաշահ քաղաք Լվովում ստեղծվել էր քաղաքային թարգմանչի պաշտոն, որը վարել են բացառապես հայերը:

Մինչև XVII դարը հայերը Լեհաստանում ամեն կերպ ձգուում էին պահպանել իրենց ազգային մշակույթը, ավանդությներն ու լեզուն: XVII դարից սկսած՝ հայկական ազնվականության շրջանում սկսվում է լեհացման (ուժացման) գործընթացը: Չնայած դրան՝ հայերի մշակույթը և արվեստը բավականին զարգանում են լեհական հոլում: Զարգանում է եկեղեցական և աշխարհիկ հայկական շինարարությունը: Հայերի ծեռքի գործն է Լվովի Մայր տաճարը, որը համարվում է ամբողջ Արևելյան և Հյուսիսային Եվրոպայի ամենագեղեցիկ կառույցներից մեկը: Աշխարհիկ կառույցների ամենացայտուն օրինակներից են քարե շինությունները, որոնք առանձնանում էին երեսպատման հմուտ վարպետությամբ: Բացի այդ՝ հայերը

գրադվում էին նաև ոսկու մշակմամբ, ոսկերչությամբ, գորգագործությամբ, մանրանկարչությամբ: Հայտնի ոսկերիչ էր Լվովցի Պետրոսը, որի համար Յան III Սթեսլիս արքայսկան պալատում արհեստանոց բացեց: Մանրանկարիչների մեջ առանձնանում էր Գժեգոժը՝ Լվովից, Սինայը՝ Տուլայից, և Լազարը՝ Բամբերդից:

Հայ ազնվականները իրենց աշխատասիրության և շրջահայացության շնորհիվ Լեհաստանում զգալի կարողություններ կուտակեցին: Նրանք պատերազմական դժվար ժամանակաշրջանում բազմիցս օգնել են բազավորական գանձարանին: Օրինակ՝ Վլադիսլավ IV-ի օրոք լվովցի ազնվական Ավետիք Բերնատովիչը բազավորին պարունական տվյալ 100 հազար դրամատ:

Հայերը շատ լուրջ էին մոտենում կրթությանը: Համարյա յուրաքանչյուր եկեղեցու շուրջ ստեղծվում էին ծխական դպրոցներ: Նրանց ծրագրի հիմքը ազգային մշակույթն էր: Ստեղծվում էին նաև երիտասարդական եղբայրություններ, որտեղ բարեկլրության դասեր էին անցնում, ձեռք բերում հնարավոր թշնամիների դեմ պայքարելու կարողություն, սովորում մեծերի հանդեպ հարգանք: Հայերը մոտեք ունեին Յագելոնյան համալսարան և Զամոստի ակադեմիա: Այդ հաստատությունների շատ պրոֆեսորներ հայկական ծագում ունեին:

Մշակույթի բնագավառում հայերի գործունեության մի ճյուղ էլ թատրոնն էր: Նրանք այդ ասպարեզում հազարամյակների փորձ ունեին, որն ընդհատվել էր Հայաստանը մահմեդական լծի տակ ընկնելուց հետո (խվամը խիստ արգելում է թատերական գործունեությամբ զբաղվել): Քանի որ Լեհաստանում հայերը կարող էին ազատորեն շարունակել իրենց ավանդույթները, ուստի XVII դարում Լվովում ստեղծվեց հայկական թատրոն, որը, կրելով եվրոպական ինչ-ինչ ազդեցություն, այնուամենայնիվ շարունակում էր հայրենական ավանդույթները:

Հայերի մշակութային կյանքում բացառիկ կարևորություն է ունեցել գիրքը: Պատերազմների, արհավիրքների ժամանակ նրանք գրքերը բարցնում էին գետնի տակ, իսկ թարսոցի մասին տեղեկությունները փոխանցվում էին սերնդեսերունդ: Գիրքը նրանց համար ազգային մասունք էր: Հայերը զբաղվում էին նաև գրչության արվեստով: Գալով Լեհաստան՝ նրանք իրենց հետ բերեցին թանկարժեք բազմաթիվ ձեռագրեր, իսկ տեղում ստեղծեցին շատ ու շատ նորերը:

Լեհահայերից շատերն աչքի են ընկել նաև գիտության ասպարեզում, մեծապես նպաստել Լեհաստանում գիտության ու մշակույթի զարգացմանը: Այդ տեսակետից առանձնապես մեծ է ականավոր գրականագետ Յոզեֆ Բարտոլոմէյ Զիմոնի, Շիմոն Շիմոնովիչի, լեհաստանի ազգային մշակույթի համաժողովի քարտուղար Գժեգոշ Պիրամովիչի և Յուլիուշ Սլովացկու խաղացած դերը. Վերջինս հայ էր մոր կողմից:

Լեհաստանի գիտության ու մշակույթի զարգացման գործում լեհահայերի խաղացած դերի մասին խոսելիս անհնար է շնչել 1902 թվականից Լվովի միտրոպոլիտ, արքեպիսկոպոս Յոզեֆ Թեոդորովիչի, նկարիչներ Աքենովիչի, Անտոնի Ստեփանովիչի, ինչպես նաև ճանաչված դրամատոր Իգնատի Նիլուֆրովիչի անունները:

Լեհաստանի կյանքում հայերի խաղացած կարևոր դերի անուղղակի վկայություն է և այն փաստը, որ մինչ այժմ լեհերենում գործածվում են հայերի կողմից ներմուծված արևելյան փոխառություններ, օր.՝ կաշտան (շագանակ), դիվան (գորգ), ֆիլիժանկա (բաժակ), տորբա (պայուսակ), ոումակ (ձի), բազար (շուկա) և այլն:

Ցավոք, Ուչպոսպոլիտայի անկումը բացասաբար անդրադարձավ նաև լեհահայերի վրա, որովհետև անկում ապրեց տնտեսությունը, կանգ առավ առևտուրը,

ուստի հայերից շատերն արտագաղթեցին այլ երկրներ, իսկ ոմանք էլ, լինելով ձեռներեց ու շրջահայաց մարդիկ, հարմարվեցին նոր պայմաններին, սկսեցին զբաղվել հողագործությամբ՝ զնելով և իրենց ձեռքում կենտրոնացնելով հոկայական հոդային տարածքներ Ստանիլավովի մոտակայքում, Կոլոմիում, Կուտերում, Շնայլինում, մինչև Բուկովինա:

Աև Աշխարհամարտերի միջև ընկած ժամանակահատվածում անցկացված մարդահամարի տվյալների համաձայն՝ Լեհաստանում այլևս հայեր չեն ապրում, բայց դա ճիշտ չէ, որովհետև նրանք, ունենալով կարոլիկական դավանանք և խոսելով լեհերեն, գրանցվել էին որպես լեհ: Մինչդեռ պարզվում է, որ նրանց թիվը հասնում էր առնվազն 5000-ի, և պատկանում էին հիմնականում կալվածատերերի, բուրժուազիայի, մտավորականության և մանր կալվածատերերի դասին: Դա նշանակում է, որ նրանց դիրքը հասարակության մեջ բավականին բարձր էր: Այդ առումով նրանք հաճախ համեմատվում էին գերմանացիների հետ՝ որպես ավելի քիչ ասինիացված խմբի:

Անփոփելով վերը ասվածը, կարող ենք եզրակացնել, որ թեև լեհահայերը որպես ազգային փոքրամասնություն, բնականաբար, չեն կարող ազդել Լեհաստանում տեղի ունեցող պատմական գործընթացների վրա, բայց և այնպես զգայի դեր են խաղացել այդ երկրի տնտեսական ու գիտամշակութային կյանքում: Լինելով Լեհաստանի հետ քաղաքական ու պետական անմիջական առնչություն չունեցող հեռավոր երկրից եկած մարդիկ՝ լեհահայերը իրենց նոր հայրենիքում ընդհանուր առնման դրսուրել են հասարակայնորեն միանգամայն դրական վարքագիծ՝ ձեռներեցություն, աշխատասիրություն, երկրի նկատմամբ նվիրվածություն ու հավատարձություն, ըստ այդ լեհերի կողմից արժանացել են հանդուրժողական, եթե շասենք ցերմ վերաբերմունքի: Եվ բնավ պատահական չէ, որ հասարակական կարծիքում նրանց նկատմամբ չեն արմատավորվել բացասական կարծրատիպեր, և եթե փորձենք ամենասեղմ ձևով բնուրագրել նրանց, ապա կարելի է ասել՝ նրանք եղել են «զեհ ազգի սուբյեկտներ»: Բոլոր ժամանակներում խաղալով Լեհաստանի և արևելյան երկրների միջն միջնորդի դեր՝ տարբեր ժամանակաշրջաններում նրանք դա իրականացրել են տարբեր ձևով՝ ելնելով տվյալ շրջանի պատմական պահանջներից ու առկա պայմաններից:

Վերջում հարկ է նշել, որ պատմական ինչ-ինչ հանգամանքների պատճառով նախ համեմատաբար ամբավարար է ուսումնասիրված լեհահայոց պատմությունը, երկրորդ՝ Լեհաստանում աչքի ընկած ականավոր դիմքերը բավարար չափով չեն ներառված հայոց պատմության մեջ: Դրա լավագույն վկայությունն է այն փաստը, որ լեհահայերը չեն ընդգրկված նոյնիսկ հայկական սփյուռքի պատմության մեջ և մայր Հայաստանի՝ սփյուռքում աչքի ընկած անվանի հայերի ցանկում:

### Օգտագործված գրականություն\*

**Քարանովսկի Բ.**, Նախկին Լեհաստանում մինչև տասնութերորդ դարը արևելքի մասին իմացություն, Լոձ, 1950:

**Քարաչ Ս.**, Հայոց պատմության որվագծեր, Տարնոպոլ, 1869, Նշանավոր հայերի կենսագրությունները Լեհաստանում, Լվով, 1856:

**Քալգեր Օ.**, 1519 թվականին Զիգմունտի կողմից հաստատված հայերի կարգավիճակը, Լվով, 1910:

**Չալեսկի Տ.**, Լեհաստանի հայ հոգևորականների կենսագրական բառարան, Կրակով, 2001:

**Զակնսկա-Գուբասովա Մ.,** Հայկական քաղաքական հայացքները XVII և XVIII դարերում, «Լյուրլինի ամսագիր», XV հատոր, Լյուրլին, 1973, **նույնի՝** Հայաստանի պատմություն, Վրոցլավ-Վարշավս-Կրակով, 1990, **նույնի՝** Հայկական թաղամասի կազմակերպումը Զամոստում՝ XVI-XVIII դարերում, Լյուրլին, 1963, **նույնի՝** Հայերը նախկին Լեհաստանում, Լյուրլին, 1982, **նույնի՝** Զամոստի հայերը և նրանց դերը XVI-XVIII դարերում Լեհաստանի և Արևելի միջև մշակույթի և առևտրի գործում, Լյուրլին, 1965:

**Կաչորովսկի Բ.,** Հին Լվովի հուշարձանները, Վարչավա, 1975:

**Մանկովսկի Տ.,** 1601 թվականին ճանապարհորդություն դեպի Պարսկաստան գորգի հետևից, «Արևելագիտական ամսագիր», 18-րդ հատոր, Կրակով, 1951:

«Երեք հաղորդագրություն 18-րդ դարի առաջին կեսին դեպի մուսուլմանական արևելք լեհական ճանապարհորդություններից (Սեֆեր Մուրադովիշ Հայի հաղորդագրությունից..., Զիգմոնտ III-ի դեսպանական հաղորդագրությունից..., Թուրքական ճանապարհի հաղորդագրությունից (1640)», Ընտրությունը, նախարանը, տեքստերի պատրաստումը՝ Աղամ Վալաշեկի կողմից, Կրակով, 1980:

**Մմիրնով Յ.,** Լվովի հայկական Մայր տաճարը՝ հանձնված հավատացյալներին, «Հայկական մշակութային ընկերության տեղեկագիր», 24/25, Կրակով, 2001:

**Ստոպկա Կ.,** Հայերը Լեհաստանում նախկինում և հիմա, Կրակով, 2000:

**ДАВИД КОЛБАЯ (Варшава) — *Страницы из истории польских армян.* —**

На основании ряда исторических данных в статье показаны участие и роль польских армян как своего рода “субэтноса польской нации” в общественной, экономической, научной, культурной жизни Польши.

---

\* Оտար լեզվով տրված աղյուրները թարգմանված են հայերեն: